

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Հ Ա Ս Յ Է


E. TOROSSIAN

Direct. - propr. du journal Arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)

Ձի հասարակածական ձեռագիրները  
ևս չեն սրայիր :



Կ Ի Ս Ա Շ Ա Բ Ա Ք Ա Ր Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊԵՏՐՈՒՆ

ԵՂԻՊՏՈՍ

Յարեկան դրո - ողջ 60  
Վեցամսայ , , 30

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան փրակց 20  
Վեցամսայ » 12

Բաժանորդագիրը կանխիկ է՝ եւ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր հասցեայով : Բարեգործական Ընկերութեանց համար 50 առ հարիւր զեղջ կ'ըլլայ :

ՇԱԲԱԹ ԹԻՒ 450

ԱՐՇԱԼՈՅԱԸ ԶԵՆՔԷ ԶԻ ԾԱՌՈՒԻՐ

ՎԵՅԵՐՈՐԴ ԾՐՁԱՆ

Անցեալ Օգոստոսամիսէն կ'ըսկըսի մեր վեցերորդ տարեշրջանը, և կը ցաւինք յայտարարել թէ՛ տակաւին շատ մը բաժանորդներ չեն բարեհաճած իրենց պարտքը հատուցանելու փոյթն ունենալ :

Եթէ միայն մեր յարգելի բաժանորդներուն վատահիւքը ըսել է որ շատ արգահատելի պիտի ըլլար մեր վիճակը :

Կրնանք ուրիշն զէժ մեր վեցերորդ շրջանին սկիզբները, ինչքեւ որ նախորդ շրջաններուն իրենց պարտքը հատուցանելու չ'իյնալ ըստ բաժանորդները հաճին իրենց հին հաշիւները կարգադրել և մեզի դիւրութիւն պատճառել մեր դժուարին գործը անսպառնալիք առաջ մղել կարենալու համար, եթէ չեն ուզեր որ հրապարակու իրենց պարտածանալու շուրջները մեր ինչիս հետ բաղդատելու ստիպուինք :

ԱՐՁԱԿՈՒՐԴԷ ՍԸ ՅԵՏՈՅ

Առաջին անգամ այս « արձակուրդ » բառին հանդիպողը, պիտի կարծէ թէ՛ Գահիրէի հայոց վարժարանին հրատարակ դրած այնչափ կնճառ ինչորոշերովը պիտի զբաղինք . որովհետեւ արձակուրդը մեր մէջ աւելի վարժարանական բառ մ'է . . .

Թո՛ղ չ'վրդովին սակայն հետեւէն կամ մտէն այդ վարժարանական խնդրոյն հետ կսպ ունեցողները . Գոնէ առ այժմ՝ այդ խնդրով չէ որ պիտի զբաղինք . այլ՝ մեր արձակուրդովը՝ որ բաւական երկարացաւ, և մեր երկար լեզու քաղցրաւնէրը իրաւունք ունենալ կարծեցին քանի մը հարկւրամէթը ևս երկարելու իրենց լեզուն, այնպէս որ՝ ծարպ-էլ-կինէնայէն մինչև Մանսուր Բաշա, Վառնայէն մինչև Գահիրէ Ալէքսանդրիայէն մինչև Թանիտա միջրկեան կախեալ կամուրջներ հաստատելու հարկ չ'մնաց, որովհետև անոնց սահմանուած դերը կատարող երկար լեզուներ կային և անոնց վրայէն կոխտեսլով անցնիլը աւելի օրինաւոր պիտի ըլլար . . .

Այնչափ միայն այս առթիւ տեղի

ունեցած այն բոլոր բարձրանքներուն համար, որոնց կապիւստակ հեղինակները յարմար առիթ սեպեցին քանի մը կարճ վարկեաններ ինքզինքին ցոյց տալու : Մենք դառնանք մեր արձակուրդին :

Իրապէս արձակուրդ մը չէր մեր քանի մը օրուան դադարը . հարկ չենք տեսներ անոր շահին հրապարակու բան մը խօսելու . մէջ տեղ դրուած գործերը շատ աւելի բարձրաձայն կրնան խօսիլ և հաստատել թէ՛ մենք աշխատութենէ փախչելու նպատակաւ չէր որ « Արշալոյս » ղ չէինք հրատարակել . այլ՝ յարմար տեսած էինք կարճ ժամանակի մը համար ընդհատել զայն, անոր շունչը եթէ կարելի էր, շատ աւելի երկարելու յուսով, ու չէնք կարծեր թէ՛ մեր նպատակին մէջ սխալած կ'ըլլանք :

Արդ՝ կը վերսկսենք մեր գործը աւելի հաստատուն հիմքով վրայ դրուած, որչափ ալ զմեր այս յալու զուրթները քիչ մը անհանգստութիւն պատճառէ մեր նախաձեռնայի քարեկաններէն ոմանց :

Առաջինկայ Նոյեմբերի 1էն ըսկըսելու « Արշալոյս » ի նորակազմ վարչութիւնը գործի պիտի սկսի և ապահով ենք թէ՛ այս վերջինները՝ որ մեր հրատարակ պատասխանեցին, շատ լուրջ դէմքեր են և մեր անցեալ տարուայ խմբագրական վարչութեան ինտելիցենտ ու ծաղրելի քաղցրաւնէրու հետ պետք չէ որ բաղդատենք :

Առ այժմ՝ այնչափ միայն մեր արձակուրդի մասին, հետզհետէ առաջի պիտի ունենանք տնչուշտ մեր ըստարարութիւնները ընդարձակելու և զո՛հացնելու մեղմով ամենէն շատ հետաքրքրուողներն անգամ :

Ե. Թ.

ՏԻԳՐԱՆ ԲԱՅԱԻ ՄԱՅԸ

Մեր կարճ գաղափար միջոցին էր որ հանդիպեցաւ Վսեմ՝ Տիգրան Բաշայի տխրառիթ մահը :

Ներկայ տարուայ Օգոստոս 1ին, մասնաւորաց ուղղուած հեռագրիւններ ծանուցին տխուր լուրը թէ՛ մեռած

է Տիգրան Բաշա Էփիան-Է-Պէնի մէջ, ուր կը գտնուէր իր առողջութիւնը դարձանելու համար :

Կայծակի արագութեամբ տարածուեցաւ սգառիթ լուրը քաղաքին մէջ, և անոր մահուան վրայ ողբացողներուն թիւը մեծ էր :

Տիգրան Բաշա՝ բացի երգչատան կան կառավարութեան ընծայած բաղձարիւմի օգուտներէն, որոց համառօտ թուումն մասնացը ըրած ենք արդէն իր կենսագրականը հրատարակելու առթիւ (տես Արշալոյս թիւ 338) ազգային գործոց տեսակետով ալ յիշատակելի է :

Արդարեւ եղած են քննադատողներ իր ազգային գործունէութիւնը՝ իբր մշտական Ատենայեան Գահիրէի Ազգ. Ներսիսի . Ժողովոյն, սակայն անոր անձին մատուցուած ընդհանուր յարգանքը անխտիր իրենց կը հերքէ այդ քննադատութիւնները :

Ենթադրենք պահ մը թէ՛ Տիգրան բաշա վեց անգամ հրատարակ իր Ատենայեան թեան պաշտօնէն և վեց անգամ ընտրութիւն տեղի ունենար, ապահովապէս վեց անգամ ալ դարձեալ իրեն անունին պիտի տրուէին քուէներն, ինչպէս վերջին երեսօթխանաց ընտրութիւնը այդ կը հաստատէ :

Եթէ Տիգրան բաշայի ազգային գործունէութիւնը քննադատելի ընող պարագայ մը, այն ալ, ո՛ր և է խընդիր ինք անձամբ լսելու համար միջոցներ պակասելը կրնայ եղած ըլլալ, ուստի Տիգրան բաշա միշտ ազգային տեսակետով ալ ամէն քննադատութիւններէ վեր կը մնայ և մենք համոզուած կը յայտարարենք թէ՛ յանձին Տիգրան բաշայի ազգին ըրած կորուստը մեծ և անդարձանելի է :

Տիգրան բաշայի մահուան առթիւ՝ ըլլա՛յ համառօտ, ըլլա՛յ ընդարձակ կենսագրական նօթքը ընկելու պէտքը չենք զգար անոր նուիրուած յատուկ հրատարակութիւն մը ընելու պատրաստուած ըլլալու համար . առ այժմ՝ անոր վրայ ողբալն է մեր բաժինը, և այդ առիթը կուտայ մեզի « Թէ իմ հայրենեացի » անունով հեղինակը, մեր միակ հին բանաստեղծը Սիմոն Ֆէլէկեան, հե-

տեւալ սրտառու յորհրով՝ զորս « Արշալոյս » ի միջոցաւ կը նուիրէ հանդուցեալ Տիգրան բաշայի յիշատակին :

ՈՂԵՆԵՐԳ

Ի սգոյի մահ Վսեմայի Տիգրան Բաշայի տ'Ապրօ, որ դրանցաւ ի կենաց՝ ի հասակի 56 ամաց :

Սեւ զգեցաւ հայոց աշխարհ,  
Լագաւ հայ ազգ, հայրենիք,  
Արարեսեւ շաշոյ փնար,  
Առաւ ողբեր ազգիկ :

Ասեկ կողմէ գայր հեծեմակ,  
Եւ ասեկ կողմ արտաւազ,  
Հայիայ դաշերէ առ հասարակ,  
Հանակեցաւ ի իւր սուգ :

« Ազգասնունիս Բագրատունեան (1) Գերեզմանեկ ձայն մեկաւ,  
Թե վառ արեւ մեր հայիակաւ,  
Մեր անկողին պակսեցաւ :

« Լացի՛ք, ըսցի՛ք, հայ մանկիկի,  
Եւ Օրհորդի հայիակաւց,  
Լացի՛ք զանի եկեղեցիք,  
Զի արձակի և շաշոց » :

Ըսաւ . ընց . դրոյեցաւ,  
Մեր հայ աշխարհի ի հիւնակց,  
Անկեղծ հայուն սիրս դաւանցաւ,  
Ընդ այս կորուստ մեծ կեանց :

Իւր բայս սկսած գրեմիս ի վեր,  
Յայնեմաւ սուտ Մասեաց սար,  
Եւ արտաւազ ու կարեկիր,  
Հոգուց հանեց վշտաւար :

Նոյն ժամ հարցոց « եւ ի՞նչ եղաւ,  
Հարուս, գիտե՛ս, կա՛մ մի քաղ,  
Իւր արեւի՛ն գրկուեցաւ,  
Մարտիրոսաց ընդ առաջ » :

« Ո՛ղ, այլ Տիգրան փակեց իսպառ,  
Թե իսրայէլայ այս կեանքիս,  
Եւ վերացաւ յերկնից կամար,  
Յ'անախա կայան անհանկիս » :

Անի և զայս իւր յառեց,  
Իւր որդեկաց երկոքիս,  
Եւ ի յերկնից զանեմ օրհնեց,  
Ըրաւ պարծանք իւր զարեմիս :

ՍԻՄՈՆ ՖԷԼԷԿԵԱՆ

(1) Տես կենսագրութիւն Տիգրան բաշայի տ'Ապրօ, հրատարակեալ Արշալոյս լրագրի . ( Չորրորդ տարի թիւ 337-338 ) յոր ամ պատմական ազատագրութեան հաստատուած է . թէ՛ ինքը Տիգրան բաշա, Բագրատունեան թագաւորազուն գերբաստանին յաջորդներէն մին է :

ՊԱՅՐԱԳԼԸ ՄԱՂԱԶԱՍԸ
Մ. Յ. ԼԱՉԻՆԵԱՆ
Մեր ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՌԱԶԵՆԻՓԵԱՆՅ

Մեծաբանակ և փոքրաբանակ կը վաճառուի նորաձևութեան վերաբերեալ ամեն տեսակ ապրանքներ, նաև ֆրանսական և անգլիական ֆիլտրոս ֆանիլաներու և գուլպաներու ամենալաւ տեսակները, ինչպէս նաև շապիկներ, տուպէ կոճակներ և ճաշակալարմար գրաւթներ, վաճառուները տեղի կ'ունենան կանխիկ, և մասնաւոր պայմաններով ապագիկ:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒՆՉԻՐ

— Կեղեցիկութիւնը Աստուծոյ ստորագրութիւնն է, իր ձեռակերտներուն վրայ:
— Բան մը չ'զիտնալու ապահով միջոցն է ամէն բան միանգամայն ստորվիլ:
— Մարդ երբէք չ'սփազանց անց չ'ունի ապրելու համար, բայց միշտ բաւական անց ունի մեռնելու համար:
— Բանաստեղծները համեստութենէ զուտ ամեն բան կը չափազանցեն:
— Երիտասարդութիւնն այնչափ վշտակրած չէ՝ որ կարենայ միխթաբել:
— Երբ մարդ զուրկ է գաղափարներէ, բաւեր կը գնէ անոնց տեղ:
4հրկ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Հրատարակուած
ՆՈՒՊՈՒՐ ԲԱՇԱՅԻ ԱՐՁԱՆԻՆ
ԲԱՅՄԱՆ ԱՌՔԻՒԻ
Աղեխանդրիս 3 Յունիս 1904
Մտադրեց և պատրաստեց
ԵՂՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ
ԳԱՂԻՐԷ
Տպագրութիւն «ԱՐՇԱԼՈՅՍ» Լրագրի 1904

Ներկայ Սեպտեմբեր ամսոյ 18 ին աւարտեցաւ վերոնշեալ պատկերագրող գրքոյ ին հրատարակութիւնը և մասնաւորապէս հրատարակ պիտի ելլէ քաղաքին «Հայկական Ազգութեան» Բնակարանին միջոցաւ, որուն նուիրած է հեղինակը՝ գրքոյ ին վաճառման ամբողջ հասոյթը:
Թէև որոշ գին մը նշանակուած չէ հրատարակութեան վրայ, բայց կարծէ որ, անկէ ստացողները՝ գոհացնեն Ազգութեան միջոցաւ Գործարար Վարչութիւնը, որ հետզհետէ աւելի լաւ տրամադրութիւններ ցոյց կուտայ ազգին ազգասիրտ միջնորդներու:
Նուիրատուութիւնները պիտի հրատարակուին:

Ն Ա Մ Ա Կ Ա Ղ Է Փ Ս Ա Ն Գ Ի Ր Ի Ս Յ Է Ն
ՁԷՑԹՈՒՆԻՐԱՐՆԵՐՈՒՄՅԷ
Ասիկ մեկուկու սարի առաջ Ձեյրունի բարեխոսը ընկերութիւնը հիմնուեցաւ. և բաւական ժամանակ շարունակեց կանոնաւոր ընթանալ. բայց այս վերջի ժամանակները մայրը չեղեր, և այլ բարոյք ունեցած և՛ այլ ընկերութեան մէկ

անդամը ըղարտ, ուրեմն և՛ իրաւունք ունի իր հարցերու քի ինչ եղաւ այդ ընկերութիւնը. ինչո՞ւ անապահովները չեն գանձուիր. Կը չունեն քի Գործ. Ժող. պատ. անդամը մեջ երկպառակութիւն ծագած է, ընկերութեան կանոնագրին զիտուած ըղարտն անաւարտ ուսի իր անդամ և՛ իր փափակող այլ ընկերութեան յարաբերութեանը՝ կողմէ ինչո՞ւ և՛ պահանջը նոյն ընկերութեան երեսնամեակեան ժողովին որ Ընդհ. Ժողով մը գումարէ, որ կուտայ ըլլալ մեկ բար անդամներու ալ վերահասու ըղարտ շարժառիթի գանձումներու յապարակման, և իւրաքանչեւ պատճառներով կը չունեն քի կուտակիսան և՛ անհասկանալի ինչո՞ւներ ալ ընկերութեան մէջ մուտք գտած և՛ սակայն պիտի է գիտնալ որ այս տեսակ անարդար կազմակերպութեան մէջ կուտակիսան կաւ անհասկանալի ինչո՞ւներ չեն մտնիր. և մեկ պիտի ինչո՞ւներ որ գանձի ի սեր ազգին քըշուած ուրբերուն՝ անյապաղ Ընդհ. Ժողով մը գումարուէր. որպէսզի վերջ մը ունենային այս անեղարարները:
ԸՆԿԵՐ ՄԸ

ՔԱՆԱՆԱՑԱԿՈՒԹԻՒՆ

Ահա ձեզի նոր շինուած բառ մը. քանակո՞ւոր լսած էիք ու հայ բառարաններուն մէջ ալ կայելի է գտնել, պէտք ունեցող թող փնտռէ. իսկ քանակաւորութիւնը՝ անհրաժեշտ է հարկել ստիպուած անցեալ օր «Թէնարտիկէ կրպակին մէջ» — իմա՛ Լսարան ըսուած անօգուտ օճաղը, որ ալ Կահրէի հայ Ժողովը ին ուսին վրայ բարձրովն աւելորդ ու անտեղի ծանրութիւն մ'եղաւ — տեղի ունեցած ծանր միջադէպի մը պատճառաւ:

Անցեալ օրերը բարեկամներու հետ տեսակցութեան մը ատեն, երբ լսուեցին Կալստեան վարժարանի տեղւոյն, զիբքին, ու զայն շըջապատող աղտոտ, նեղ ու սարդիտայնալից փողոցներուն վրայ դարձաւ, անոնցմէ մին իրաւամբ այդ ծարպէլ կիսեղանի համար լըրտու ճէ սխալ. լըրտու տուաւ. և իրաւի ալ հոն է որ տեղի կ'ունենան ստէպ գզուրտուքները, սպանութեան փորձերը, և քահանայականութիւնները:

Մեզք որ այդ փողոցներուն աւրելեան հիւսիսային սահմանին վըրայ մեր եկեղեցին, առաջնորդարանը, վարժարանը, աղքատախնամին խորհրդարանը և՛ կը գտնուին, իսկ արեւմտեան կողմը, էն վերի գլուխը շըջուած համար, Լսարան օրանախը՝ Ալպէտք է որ այսչափ բարեկրթից (°) հաստատութեանց մէջ տեղի ունենան այնպիսի դէպքեր, որ լսողին զարմանք և միևնոյն ատեն կատաղութիւն կը պատճառեն:
Թէ ի՞նչ տեղի ունեցած է անկիայ պատմեմք, ստալդ աղբիւններէ մեր լսածները նոյնութեամբ քերականացնելով:

Անցեալ շաբթու մէջ, Տէր Աւետիս Գահրէի Ծաղոյեան Լսարան քանակաւորութիւնը կերթայ, Ձեյրունի վարժարանը ընկերութեան անգամներուն հրատարակող պատրաստելու համար, ու հոն, սեղանի մը վրայ նստած առանձին իր աշխատութեամբ զբաղած կ'ըլլայ Պէտք է աւելցնել թէ՛ Լսարան ըսուած տեղը ընդ միշտ ամայի ու անհարգարկ անապատներու կը նմանի, երբ անոր վարչութիւնը ստանձնող պարսններուն հրամայական խաղաղ ձայնը երբեմն արձագանք չեաւ տար հոն. պարսններ՝ որոնք մինչև ցարդ չեն կրցած հասկնալ թէ՛ այդ Լսարան ըսուածը իրենց երազած փառքին պատուանդանը ըլլալու յատկութիւններէն զուրկ է և գոյութեան ալ իրաւունք չ'ունի հիմայ, ու այս բանին վրայ է անոր այցելուներէ ընդ միշտ գուրջ մտքը, որուն պակաս ըրաջանէ կը կ'ործեն իրենց երեսնամեակի իրաւունքները որուն համար ամ մասական բաւական կ'ըլլի զուտ մը հայերու գրպանէն սուտուելով յուժարեալ կը վատնուի:

Մեր պատմութեան շեղած շըլլալու համար աւելցնենք որ Օննիկ Թումանյան անունով շարքաւորուած պարսնը, չ'զիտուի իր ինչ տեսակի յանդիմանութիւնը սպառնացանելու համար, կը յարձակի հայ քահանային վրայ և մինչև քահանային ինքզինքը գտնելը մէկ քանի զօրաւոր հարուաններ կը աւելուորէ անոր գլխին, երեսին և ուրիշ տեղերուն վրայ, ու կծիկ կը դնէ. հոն գտնուող փէլլաւներ՝ հայրէթ թէ արկածին զիտակ կ'ըլլան ու քահանային օգնութեան համար կ'ուզեն, սակայն ինչպէս ըսինք, յարձակող պարսնը արդէն փութած էր:

Այսչափը դէպքը պատմելու համար այս անգամ առաջիկայ թըլլալով մեր հետամտութեան արդիւնքը պիտի հազարներէ թէ՛ մեր ազգային Առաջնորդարանը ինչ միջոցներ ձեռք առած է հայ քահանային մը դէմ եղած այս անարդանքին պատիժը տալու համար և թէ Օննիկ Թումանյան շարքաւորուած ինչ արդարացի պատճառներով հայերու կրօնքին պաշտօնէին վրայ յարձակելով, հայու նուիրականութիւնները ոտքին տակ առնելու կը յանդիմանի: Թէնք այժմէն երկու բառով ըսենք թէ՛ Պ. Օննիկ Թումանյան իր արարքով ո՛չ թէ քահանային անպատուելու անարգել ուզած է, այլ սարդից հայութեան պատիւը ոտնակոխելու թէ՛ այդ քահանային ծանր յանցանքի մը մէջ գտնուած է իսկապէս, ինչ որ չենք կարծեր, զայն օրինաւորապէս պատժելու գործը ձեռնհաս իշխանութեան կը պատկանի, ու ոչ թէ՛ ո՛ր և է Օննիկ Թումանյանի մը, որ մեր կրօնքին ալ չ'պատկանիր, այլ հրէաներուն հետ շարքաւոր կը պաննէ...
ԹԻՉՆԻԿ

Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն. Լ. ՈՒՐԵՐ

Վեչ. ԿԱՌՈՂԻԿՈՒԸ
Ամենէն լաւը և գործնական միջոցն է որ վերջերս ձեռք առած է Վեչ. Հայրապետը, հայաստանի մէջ հայերու վրայ ի գործ դրուած վայրագութեանց դէմ պատուար մը կանգնել փորձելու համար:

Թէպէտե՞ Վեչափառին այս վերջին տնօրինութեանը մասին հայ թերթերէն ոմանք պահ մը վերապահութիւններ ընելու ձեռք առին, բայց գտնուեցան ալ որ Հայրապետական օրոյման իսկութիւնը հազարգեցին մեզի. այն է՝ երկու եպիսկոպոսներ և երազական տէրութեանց մօտ զրկել, անոնց ուղղութիւնը հրատարակու համար իր քահանայութեան տնտեսելի կայսրութեան վրայ, և պահանջել անոնցմէ Պէրլինի վեհաժողովին ստորագրած Յերբ. յօդուածի գործագրութիւնը:

Վեչ. Հայրապետը այս պատգամաւորական պաշտօնը յանձնած է Հեղհաստանի և Պարսիստանի ինչպէս նաև Ամերիկայի առաջնորդներ. Այվասեան և Սարաճեան եպիսկոպոսներուն, որոնք արգէն և բնեց պաշտօնին ձեռնարկած և վերջերս ալ ֆրանսական Հանրապետութեան նախագահ Պ. Լուպէին և Նոյն տէրութեան Արաքսին Գործոց նախարար Պ. Տէլլապէին հետ տեսակցած և իրենց առաքելութեան նըպատակը բացատրած էին. և թերևս մինչև ցարդ ուրիշ նորանոր քայլեր ալ առին միևնոյն նպատակաւ:

Մեր յեղափոխական Կուտակչութիւնները, որոնք բաւական լայն միջոցներ ունին իրենց գանաղան շարժումները ի ձայն փողոյ և թմբակի ձայնուցանել հայերու և նոյն իսկ ուրիշ ազգերու ալ, սակայն այդ ամենուն դէմ մեր սխալիմ թշնամին, թուրք իշխանութիւնը, զրգուած մտքերը հանդարտեցնելու համար առաքելութիւններ կարող է ընել. «խուժարար» ներու գործ ներկայացնելով դէպքերը. սակայն ինչպիսի պատասխանել արգեօք մեր ազգին գլուխը եղող պաշտօնատան մը — Կաթողիկոսարանին — բրած օրինաւոր և պաշտօնական զիտուածին Վեչ. Կաթողիկոսը՝ այս վերջին գործնական քայլով, իր ազգային այնչափ փայլուն գործունէութեան արձանագրութիւնը քով նոր ու կարեւոր էլ մը կը բանայ, բայց երկինք որ իր ձեռնազարդ քայլերը յաջողութեամբ արգիւնաւորուէին և փափաքները պահապարդուէին:

ԵՐԵՎԱՆԻՆԵՐԸ
Մեր ընկերացիները գիտեն թէ՛ Գահրէի երեսնամեակներու գրեթէ կէսին ընտրութիւնը համեմատականի մնացած էր և երեսն եկած խօլըն:

# Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԸ ԵՒ ԸՆԿ.

Գ.Ա.Ն.Ի.Ի. (ԵԳԻՊՏՈՍ)

## ՍԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼՈՅՍ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ ԵՒ ԵՂԻՊՏԱԿԱՆ ՍԻԱՐԷՔՆԵՐՈՒ  
Յանապետ պատրաստած մեռաչեն սիկարեթներ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳՂԱՍԻՄՈՒ ՄԹԵՐԱՆՈՅ  
Հեռագրական Հասցի: ՓԷՄՊԵՃԵԱՆԸ: ԹԻՖԼԻՍԻ ԹԻՎ 689

ՀՐԵ ԶԱՊԹԻՅԷԻ ԴԻՄԱՑ  
Նամակատեղի՝ 129թիւ

դատները բաժնալու համար, Ընտրող. ժողովը Կ. Պոլսոյ Պատրիարքարանին գիծած էր՝ անոր ձգտելով անան հը- բաժնազները ստանալու համար...  
Մեր Պատրիարքարանի պատաս- լանը զմեզ չ'սխալեցուց. Գ.Ն. ԵՆՔ որ մեր արգէն երեւակայածին նման պատասխան մը տալով հաստատեց թէ՛ նա ալ մեծ և երեսակայական կցակի մը հոսէն զղլում էր... և համեմատականներու ընտրութիւնը կատարուեցաւ:

Այս լուրը մեր կողմէ ծանուց- ուիլը սակայն, չ'նշանակեր երբէք թէ օրինաւոր եղանակաւ կատարուած օրինաբ նկատու ընտրութիւնները, մեր ազգին, մանաւանդ Գահիրէի ազգային գործերը՝ որչափ նկատու ենք, ստուերներու մէջ շարժւելիզ ոգիներ եղած են միշտ. սակայն կը- նայ պատահիլ որ յարգելի նոր ըն- տրեալները իրենց ոգտակար գոր- ժերով մեր մշտամնայ բողոքները չ'չոյսնուր նոր աւելիներ չ'են ընծա- յեր, և որչափ ալ իրենց ընտրու- թիւնները զեզմաններու և օրինա- զանցութեանց արգիւնք ըլլայ, մենք գարձեալ պատենթութիւնը կուենանք իրենց ազգոգտութիւնը հռչակե- լաւ:

Ան այժմ մենք ծանուցանելով նորընտիր երեսակայանց անուննե- ըր, կ'աւաղագրենք քայլ աւ քայլ հետեիլ իրենց և իրենց գործոց, ի- ընց պաշտօնակարութեան լրումին - և թէ ողջ մնանք - ընդհանուր և ան- հաշիւ մը ներկայացնել կարենալու համար հոյ հանրութեան:

Համեմատականի մնացած եօթն երեսակայանց հայկական քուէար- կութիւնը — Աստուած քուէարկու- թիւն ընէ — հետեւել արգիւնքը ստուած է:

Տ. Տ. Տր. Նաղարէթ Պ. Քէլէ- ճեան. Կարապետ Մեղրեան. Սեդ- րաք Գաւթեան. Մկրտիչ Անդրա- նիկեան. Աստու Ալանեան. Բարթիկ Նազապետեան. Վառժ Գարեթը- ճեան:

Կըստի թէ՛ վերջիչեալներէն ոմանք մեծամասնութեան ձոյնով, այսինքն քուէարկողներու թուոյն կէսէն գոնէ մէկ աւելի քուէ անե- նալով, ընտրուած չ'են, սակայն այս պարագան անշուշտ զանց կ'անուրի, և մենք՝ համաձայն մեր սրտման, երեսակայանց անդրանիկ ժողովէն անմիջապէս վերջ, իբր պարտակա- նութիւն կը ձեռնարկենք անոնց բա- լորին ալ կենսագրականները առան- ձին առանձին հրատարակելու այս էջերուն մէջ:

### ՏԻՖԼԻՍԻ ԱՍՇԽ

Առաջիկայ Նոյեմբեր ամսոյ մէջ Գահիրէ պիտի փոխադրուի հան- զուցեալ Վսեմ. Տիգրան բաշայի մարմինը որ դեռ Եւրոպայ կը մնայ զմտուած վիճակի մէջ:

ԿԻՊՐՈՍԻ ԱՌԱՋՆՈՒՂԻ  
Կիպրոսի առաջնորդ Կեր. Պետ- րոս վարդապետ Սարաճեան, որ օ- զախոյսութեան համար քաղաքս կը զանախ, անցեալ կիրակի օր քաղա- քիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ պատարագ ց և քարոզ խօսե- ցաւ. այս մասին օրիշ անգամ պի- տի գրենք:

### ՈՒՐԱՆԱԿԻ ԼՈՒՐ ՄՊԱԼ

Գահիրէի հայոց Բարեգործական Ընկերութեան համար, որ երեսուն հատի չափ Գրէտի Փոստիչի թուղթեր զնած է կ'ըսեն իր պահեստի զու- մարէն և որոնց թիւերը տակաւին բաժանորդաց ալ ծանուցուած չ'է կելեր, լուր տարածուած է թէ՛ վեր- շերս 100,000 Ֆրանկի առաջին պարգև մը շահած է:

Այս լուրը մեզի քիչ մը զար- մանք կը պատճառէ, որովհետեւ այդ- չափ կարեւոր դուրս մը ստանալէ վերջ, Ինչպէս կ'ըլլայ որ անոր բաժ- նի թղթերը բարձրացում չ'են ունե- նար և միշտ դէպի անկում տրա- մադրութիւն մը ցոյց կուտան, հա- կադակ ամական որոշեալ և ապա- հով զուտ հասոյթ մ'ալ ունենալու: Բաժանորդ ընկերները պէտք է որ արթնութեամբ հետամտին այս հա- նելու կը լս ծիւղու համար:

### ՀԱՆՆԱԿԱՆ ԿՈՒՄԻՏԵՐԻՆ

Տարօնի արկածեալներուն ինը- պատու Ազգբանագրի մէջ հանդա- նակութեան մը ձեռնարկուած է, և տեղւոյն առաջնորդարանէն կը ծա- նուցուի թէ՛ Վսեմ. Ա. Բարթոլոմայ- շա 4875, Վսեմ. Տիգրան Երանուհի Բարթոլոմայ ըստ 1950, Ազնուաշուք Յակոբ պէյ Բարթոլոմայ 975, և Տի- արք եղբ. Կամսարական 1950, Մ. Թեյեան 97, 5, Մանուկ Շահապեան 77, Տ. Յ. Բ. Քէլէ. Յակոբեան 50 և Տէր Ռուբին Քէլէ. Գալիկեան 30 ական զըջով մասնակցած են հանգանակու- թեան: Սոյն Ա. ցուցակի գումարը կը հասնի 10,004, ու կէս զըջի, և շա- բունակելի է:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Երկրի հայերուն վիճակը հետզնե- ալ կը ծանրանայ և որոտածուիկ ու ա- նել կացութեան մը մէջ կը մխրձի: Տա- րօնի անասելի խեղճ վիճակը (Պատրի- արքական բառով) ամէն ստորագոյն վեր է... Սրբ. Պատրիարքը, մասնա- տրաք ուղղուած նամակներով՝ որոնցմէ մին հրատարակուած անհետեցաւ «Փո- ղովուրդ յի մէջ, բարեկերտ անձնաւո- րութեանց անտաճեանութեան կը դիմէ և այդ նամակներով կը յայտարարէ նաեւ թէ՛ Վեհափառ կայսեր ալ զթու- թեան ( ) զիտած է, որ Բանի մը փա- ռայ շնորհէ, « Ի քուտութեան և Ի թու- ղութեան մեղաց... »: Մինչդեռ միւս կողմէ, հակառակ թուրք կատաղաբու- թեան յայտարարութեանց, թէ՛ սուլթա- նը 5000 ոսկի նուիրած է վերաշինելու համար Սասունի գուտտին մէջ այրուած

և աւերակ տուները, այժմ Բոս Արմե- նիա կը սեղեկանայ թէ՛ այդ գումարը գորանցներ կառուցուելու կը գործա- ռի, և Ի լրումն զժողովութեան, հայ ժողովուրդը կը բանագասուի տարապար- ճակ աշխատելու յիշեալ շինութեանց Ի հաշիւ: Տիրոջ թշուառութիւնը անդար- մանելի է:

Վանէն հասած լուրերն ալ բոխա- լից են. թէ և մեր մէջէն կան որ վերի- վերոյ քննելով այդ լուրերու պարունա- կութեան, կարճատեւ միջթարութիւն մը կ'զգան:

Ան թըքական ազրիւրներէ ստաց- ուած հետազրիւնքը:

Կ. Պոլսոյ 3 Սեպտ. — Հայաստանի մէջ Սեպտեմբրի վերջերը ապստամբու- թիւն մը ծագելը ծանուցուած ըլլալով, երզնկայի Չորրորդ գորաբանակը շարժ- ման մէջ գրուելու հրաման զրկուեցաւ: Ապստամբութեան ո՛ր և է փորձ անմիջա- պիս զարկելու նախար ամենախիտա հը- բամաններ արուեցան:

Շատ զիւրիւն է երեսակայել թէ՛ Ինչ պիտի ըլլան այս խիտ նամակնե- րուն հետեւեալները...

Պէրութէն կը նեապրուի թէ՛ «Վա- նի մէջ արեւնանդ կոխ մը եղեր է Թուրք գործերու և հայ յեղափոխական- ներու միջեւ: Սեպտեմբր 1ին յեղափո- խական խումբերը քաղաքին վարի թա- ղերը գրաւեր են և տեղական իշխա- նութիւնը անմիջապէս իմացնելով զին- տրական խումբերուն, ընդհարում տեղի ունեցած է, որում 10 հայեր սպաննե- լած և չատեր ալ վերադարձուած են: Քաղաքին քրիտոնեաները սարսափու- հար Գոմիտիկեան կրօնաւորներու վան- քը ապստամբ են և»

Կ Պոլսէն ալ Սեպտ. 2ին Ռիւթէրի գործակալութիւնը հետեւեալը նեադ- րած է:

«Վանէն ծանր լուրեր եկած են հոս: Օգոստոս 31ին, հայ ապստամբներ քաղաքէն ներս մտնելով չորս առեւեր կրակեր են, որուն հետեւանքը եղած է կոխ մը թուրք գործերու հետ, որոնցմէ երկու հոգի սպանուած են, նոյնպէս ուրիշ քան հոգիներ ալ մեռած են: Տեղական իշխանութիւնները կրակի տուած են շրջակայ առեւերը որպէս զի գործերը զիւրու կարենան պաշարել ա- պստամբներուն գրաւած առեւերը:

«Քաղաքացիները սարսափահար ե- ղած են և շատ հայեր քաղաքէն փախ- չելով գուրս կ'ելլեն, մինչ ուրիշներ ալ եկեղեցիներուն մէջ ու շրջակայ վան- քերը կ'ապստամբին: Տեղական իշխա- նութիւնները կը յայտարարեն թէ հայ- կական ուրիշ խումբեր ալ պարսկական սահմանագիտին ներս մտնելու կը պատ- րաստուին, Վանի անդրիական զիւր-հիւ- պատար որ Մուշ կը գտնուի մասնաւոր պաշտօնով, հրաման ստացած է Վան վե- րադառնալու:»

Ասկէ տխուր, սակէ աւելի սարսա- փեցուցիչ Ինչ լուր կարելի էր ստա- նալ: Վերոյիշեալ հետազրիւր ծայրէ Ի ծայր թըքական վարսագութիւն կ'են- թարգ, որուն եթէ չ'կոկուած ու չ'խե- ղութիւրուածը հետազրու էր, հետեւեալը պիտի ըլլար պարունակութիւնը, որ բուն իրողութիւնն էր և ալ յաւելտ ցաւալի մեզ հայերու համար:

«Թուրքերը վանի մէջ հայացիներ ջաղաքակառութեան սխալմը Ի գործ կը գնեն, ըստ իրենց սովորութեան:

«Տարածուելով թէ հայ յեղափո- խականներ քաղաք մտած են և պա- տրուակ բանելով այդ սուտ տարածայ- նութիւնները, սկսած են յարձակիլ հայ առեւերուն վրայ, և սպաննել ու կո- ղուել իրենց պաշտպանութեանը յանձնուած անդէն ու անոք ժողովուր- ղը, անոնց առեւերը քանդել, այրել ու տեղերի և սարսափահար ընել զանոնք, որոնք ամէն ինչ թողով փախչելէ գատ ուրիշ բանի վրայ չ'են մտածեր: Շատեր վանքերն ու եկեղեցիները կ'ապստա- նին, որպէսզի թուրք գործերը հաւաքա- բար ձեռք անցնեն զիւրիւր ու ոչնչացը- նեն: Թուրքերը իրենց վարսագութեանց անձամբը ընդարձակ պահելու համար սուտ տարածայնութիւններ կ'ընեն թէ նոր յեղափոխական խումբեր պիտի հաս- նին Պարսից սահմանագիտին և են: Եւն:»

«Վանի անդ. հիւպատոսը որ Մուշ կը գտնուի քան տեղի պատահարները խեղաթիւրելու և թուրք կատաղաբու- թիւնը արդարացնելու համար, այժմ միեւնոյն պաշտօնով Վան գնացու հը- հանգ ստացած է և են:»

Այսպէս մեր զժողովութիւնը ան- վերջանալի է. չ'ենք զիտեր թէ երբ վերջ մը պիտի ունենան անոնք, որպէս զի տառապեալ հայութիւնը քիչ մը շուտն առնել կարենայ:

ՅԱՄԻԿ

### ՊԱՏԻՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև վերջին օրերս Ռուսո- ձաբնական պատերազմի մասին հա- սած հեռագրիները գրեթէ երբէք նպատաւոր հանգամանք մը չ'ունին Ռուսոյն համար:

ձաբն իր մասնակի յաղթա- նակիներով մեծ պետութեանց մէջ հարուստ իր գաղիին փառագոր- դելու կը նկրտի: Օրուան ամէն մէկ ժամերը ձաբնի մեծ կամ փոքր մէկ յաղթութիւնը կը պարունակեն իրենց մէջ:

Ընթացիկ ամսոյս սկիզբները տեղի ունեցած ընդհարումներուն մէջ Ռուսները մեծամեծ կորուստներ տը- ւած են, հարեանցն հաշիւ մը 15- 20000 հոգիէ աւելի կը բարձրացը- նէ ռուսական կորուստը:

Թէ և՛ ձաբններն իրենց կար- զին բարձրովն անմիտ չ'են մնար, սակայն միւս կողմէ մինչև վերջերս ալ իրարու յաղթողը հեռագրիներ- ըր շատ վարդազոյն չ'են նկատեր Ռուսերու վիճակը:

### ԿԱՐԴԱԼ

Առաջիկայ թուով Տ. Ա. Մարկեանի մէկ զուարճալի քրոնիկը, որուն նիւթն է «Պատկեր մը վերջին դատաստանէն»:

